

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ «ՅԵՐԱՑԻ» ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՄԻԿՐՈԿԼԻՄԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՂՄՈՒԿԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԻԳԻԵՆԻԿ ԳՆԱՅԱՏՈՒՄ

Վարդանյան Զ.Կ.¹, Հայրապետյան Ա.Կ.²

¹Երևանի պետ. բժշկական համալսարանի հիգիենայի եւ Էկոլոգիայի ամբիոն, Երևան, Հայաստան

²Երևանի պետ. բժշկական համալսարանի հանրային առողջության ամբիոն, Երևան, Հայաստան

Պայմանավորված մարդու օրգանիզմի վրա ավելցուկային ջերմության անբարենպաստ ազդեցությամբ՝ հարավային քաղաքների միկրոկլիմայի նորմավորման խնդիրը մեծ գիտական հետաքրքրություն է ներկայացնում: Հարավային քաղաքների շոգ և չոր կլիման առաջացնում է մարդու օրգանիզմի գերտաքացում, ինչը հանգեցնում է ջերմակարգավորիչ ապարատի գործունեության զգալի լարման: Մարդու առողջության համար նպաստավոր շրջակա միջավայրի ապահովումը հանդիսանում է սանիտարա-հիգիենիկ կարևորագույն խնդիրներից մեկը: Հատկապես կարևոր է հարավային քաղաքներում արհեստական միկրոկլիմայի ստեղծումը՝ դրանց խելամիտ կանաչապատման միջոցով: Հանդիսանալով տարածքի համալիր բարեկարգման և լանդշաֆտային կազմակերպման մասնիկը, կանաչապատումը ապահովում է բարենպաստ միջավայրի ձևավորումը՝ բուսական բաղադրիչների գործունե կիրառմամբ:

ԵրԴԲՀ կլիմիկաներում 2007-2010 թթ. անցկացվել է կանաչապատման լայնածավալ վերակազմակերպում: Կլիմիկայի պայմաններում ֆիզիկական, քիմիական, ճարտարապետա-նախագծային, սոցիալ-հիգիենիկ գործոնների համալիր գնահատման արդյունքում մեր կողմից մշակվել և ներդրվել են կանաչապատման նոր սկզբունքներ՝ ուղղված հիվանդանոցային միջավայրի առողջացմանն ու գեղեցկացմանը:

Ներկայացված աշխատանքի նպատակն է կանաչապատման վերակազմակերպմանն ուղղված միջոցառումների գնահատումը՝ ըստ միկրոկլիմայական ցուցանիշների և աղմուկի մակարդակի հիվանդանոցի տարածքում և մերձհիվանդանոցային գոտում:

Ուսումնասիրության արդյունքում ստացված տվյալները ցույց են տալիս, որ նույնիսկ ոչ մեծ կանաչապատ տեղամասերը դրականորեն են ազդում շրջապատող տարածքի միկրոկլիմայի վրա, նվազեցնելով օդի ջերմաստիճանը և բարձրացնելով հարաբերական խոնավությունը, ինչպես նաև թույլ են տալիս վկայել, որ բուժկանխարգելիչ հիմնարկների խելամիտ կանաչապատումը ի գործ է հիվանդանոցներում նվազեցնել աղմուկի մակարդակը և ապահովել անհրաժեշտ բուժական-պահպանիչ կանոնակարգը: